ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2019 թվականի N 462

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշման 8-րդ կետի.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասում կատարել վերաբաշխում՝

1.Նվազեցնել <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> (01.06.01.51) ծրագրի <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածից 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի՝ <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> (4819) հոդվածին:

2.Նվազեցնել <<Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններ>> (01.03.01.51) ծրագրի <<Կենցաղային և հանրային սննդի նյութեր>> (4267) հոդվածից 10000 (տասը հազար) ՀՀ դրամ, <<Գրասենյակային նյութեր և հագուստ>> (4261) հոդվածից՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի <<Ներքին գործուղումներ>> (4221) հոդվածին 28600 (քսանութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> (4111) հոդվածին՝ 6400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2019 թվականի N 463

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կարեն Անդրանիկի Խոսրովյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի նոյեմբերի 12-ի N4424 դիմումը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, Կարեն Անդրանիկի Խոսրովյանին ժառանգության իրավունքով պատկանող (ժառանգության վկայականը տրված՝ 11.11.2019թ., սեղանամատյանում գրանցված 1351-ով) հողամասերին տրամադրել՝

1)09-005-0049-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,06 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, Մեղրի քաղաք, Այգեգործների փողոց թիվ 22/6» հասցե.

2)09-088-0003-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,042 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, Վահրավար գյուղ, 2-րդ փողոց թիվ 13/6» հասցե:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Անդրանիկի Խոսրովյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2019 թվականի N 464

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշման դրույթներով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետով և հիմք ընդունելով Գրիշա Գալուստի Աղաջանյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 08.11.2019 թվականի թիվ 4396 դիմումը.

որոշում եմ՝

1.Առանց նախագծման և շինարարության թույլտվության փոխել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի Ագարակ քաղաքի Շինարարների փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, Գրիշա Գալուստի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 1167264) 0,0425 հա մակերեսով հողամասի և նրա վրա ամրակայված 75,3 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը որպես՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր, իսկ շինությունը՝ հանրային սննդի օբյեկտ:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2019 թվականի N 465

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող 149քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող 0,0149 հա բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 149 քմ մակերեսով շինությունը (բնակելի տուն) դիտել որպես 1 (մեկ) միավոր և տրամադրել՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, Ագարակ քաղաք, Չարենցի փողոց թիվ 40/55>> հասցե:
2.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաք Չարենցի փողոցի թիվ 40/55 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված 149 քմ ինքնակամ կառույցը (բնակելի տուն) համարել Մեղրի համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
3.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետի վրա:
5.Որոշման կատարման վերահսկողությունը դնել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 19
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2019 թվականի N 466

<<ԲՈՐԴ ՇՈՓ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, <<ԲՈՐԴ ՇՈՓ>> ՍՊ ընկերության՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. նոյեմբերի 18-ի N4498-Ֆ հայտը.

որոշում եմ՝

<<ԲՈՐԴ ՇՈՓ>> ՍՊ ընկերությանը (գրանցման համարը՝ 79.110.1056824) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Սահմանամերձ փողոցի թիվ 11/1 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 19
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2019 թվականի N 467

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԳԵՅ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Սերգեյ Բունիաթյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. նոյեմբերի 18-ի N4499-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Սերգեյ Բունիաթյանին (գրանցման համարը՝ 282.59965) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի N2393 զորամասի հարևանությամբ գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 19
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2019 թվականի N 468

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 13 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի «Համայնքի սոցիալական ծրագրեր» ծրագրի (10-07-01-51) այլ նպաստներ բյուջեից (4729) հոդվածից դրամական օգնություն տրամադրել ներքոհիշյալ քաղաքացիներին՝
1)Նոնա Ներսեսյանին՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ (2019 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների համար), համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվող դստեր՝ Մարի Ներսեսյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
2)Մեխակ Հովհաննիսյանին՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
2.Համայնքի մանկապարտեզի կողմից մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճարի գումարը փոխանցել 900305000912 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 21
ք. Մեղրի